

25.237

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

«Պահել ամենախոֆր խնայողու-
թյունը մեր խոսքը մեքենայական
ինդուստրիայի համար»:

ԼԵՆԻՆ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻ III ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԿԱՄՊԱՆԻԱՅԻ (ամսականի) ՀԱՍԱՐ

Թ Ե Զ Ի Մ Ն Ե Ր

(Գյուղական ժողովներում գեկուցողների համար)

332.2

14-63

Г.П.Б-ка обяз. экз.

Лнгр. 1930 г.

АКТ №

122

19061

ԹԻՖԼԻՍ - 1930 թ.

Պոլիգրաֆ. 2-րդ տպ.,
 Լենինի փողոց № 3.
 Պատվեր 552 տիրութ
 1800. Գլավլիտ 337

1. Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխության
 մեջ շահագրգռված են չհավար յեվ միջակ գյուղացիու-
 քյան ամենայայն խավերը

Բանվոր դասակարգը, չքավոր տարրերի վրա
 հենվելով, աշխատավոր գյուղացիության միջակ մաս-
 սանների հետ միացած, կոմունիստական կուսակցու-
 թյան ղեկավարութեամբ, հասել և սոցիալիստական
 շինարարութեան և մեր արդյունաբերութեան ու գյու-
 ղատնտեսութեան վերաշինութեան գործում խոշոր հա-
 ջողութեաններին:

Մեր ամբողջ ժողովրդական տնտեսութեանը, ինչ-
 պես նաև գյուղատնտեսութեանը ղեկավարող սկզբունքը
 հանդիսանում և խոշոր ինդուստրիան (արդյունաբե-
 րութեանը): Այս պատճառով և, վոր մենք նոր ահա-
 վին արտադրական հսկայական ձեռնարկների կառու-
 ցումն ենք իրագործում, ամեն կերպ զարգացնելով
 գործիքների արտադրութեան միջոցների արտադրու-
 թեանը: Գյուղատնտեսութեան աճման հետ մնալը ար-
 դյունաբերութեան զարգացման տեմպից առաջ և բե-
 րում պարենի և հում նյութի գծավարութեաններ: Այս
 պատճառով գյուղատնտեսութեան վերաշինութեանը
 սոցիալիստա- ստեղծատ, խոշոր համայնացրած
 և ձեւը, կոլտնտեսութեաննե-
 գյուղս

րի և խորհանդեսությունների ղարգացումը, մեքենատրակտորային կայանների և գյուղացիության արտադրական համայնացման կազմակերպումը, բերքի բարձրացումը և չքավոր ու միջակ տնտեսությունների ցանքսային տարածության լայնացումը — այս և մեր առաջին հերթի խնդիրը:

«Մենք չենք կարող թաղցնել վոչ գյուղացիներից և առավել ևս գյուղի պրոլետարներից և կիսապրոլետարներից, վոր մանր տնտեսությունը... անկարող է մարդկությունն ազատել մասսաների աղքատությունից, վորը հարկավոր է խոշոր համայնացրած տնտեսությանն անցնելու մասին մտածել և անցնել գործի անմիջապես, սովորեցնելով մասսաները և մասսաներից սովորելով, վորոնք ենք անցնելու գործնական նպատակահարմար միջոցները ¹⁾»:

Այսպես եր գրում իր ժամանակը Լենինը:

Կոմմունիստական կուսակցությունը և խորհրդային կառավարությունը իրագործում են յեռանդուն կերպով գյուղատնտեսության սոցիալիստական արժատական վերաշինության գործը գյուղում, վորի մասին ասում եր Լենինը:

Տեխնիկապես հետաձայն մանր անհատական գյուղացիական տնտեսությունը վերջացնում է իր դարը: Բուն կերպով աճում է ու զարգանում խոշոր համայնացրած յերկրագործությունը: Չքավոր ու միջակ լայն մասսաները բաց ճակատով անցնում են հողի միասնական մշակման — գյուղատնտեսական արտադրության գործիքների համայնացման (գյուղատնտե-

¹⁾ Հատոր XVI, մ. 1, եր. 89:

սական ինվենտարի համայնացումը, մեքենաների և ձիաների կայանների կազմակերպումը և այլն). կոլտնտեսությունների շինարարությունն ընդունում է իսկապես մասսայական ձևեր: Արտադրության հին գործիքների փոխարեն գալիս են տրակտոր, մեքենա-կայան, կոմբայն — նոր սոցիալիստական տեխնիկան:

1927—28 թ. մենք ունեյինք միայն 445 հազար կոլտնտեսությունների մեջ համայնացրած ծուխ: 1928—29 թ. ունենք արդեն 1040 հազ., 1927 թ. յեղել է միայն 15670 կոլտնտեսություն: 1929 թ. նրանց թիվը հասնում է 61 հազ., նրանց ցանքսային տարածությունը 4,3 միլլիոն հեկտարի. իսկ ընդհանուր արտադրությունը աճել է 240 տոկոսով և ապրանքայինը — 278 տոկ.: Կան արդեն համատարած կոլլեկտիվիզացիայի ամբողջ ուսյոններ:

Ա. Ս. Ֆ. Խ. Հ. մեջ 1927—28 թ. մենք ունեյինք 12900 կոլտնտեսությունների մեջ համայնացրած ծուխ, 1928—29 թ. 33000 ծուխ, իսկ այսոր 52000 ծուխ, 1927 թ. կոլտնտեսությունների թիվը Ա. Ս. Ֆ. Խ. Հ. մեջ յեղել է 697, 1928 թ. մենք ունեյինք 1555 կոլտնտեսություն, նրանց ցանքսային տարածությունը յեղել է 52000 հեկտար 10468800 ռ. ընդհանուր արտադրությամբ և 5578000 ռ. ապրանքային արտադրությամբ:

Կոլլեկտիվիզացիայի հսկայական տեմպերի հետ միաժամանակ՝ մենք հասանք նաև խոշոր հաջողությունների, խորհանդեսությունների և մեքենատրակտորային կայանների շինարարության բնագավառում: Խորհանդեսությունների ցանքսային տարածությունը 1929 թ. գարնանը աճել է 27,5 տոկոս (փոխանակ

պլանով նախատեսված 26,3 տոկոսի) և հացահատիկների ընդհանուր արտադրությունը 34,7 տոկոսով:

Գյուղատնտեսություն համայնացրած սեկտորում ընդհանուր արտադրությունը հասել է 1928—29 թ.—612,8 միլիոն բուբու (1927—28 թ. 283,2 միլիոնի դիմաց) և ապրանքային արտադրությունը 263,9 միլիոն բ. (1927—28 թ. 134,5 միլ. բ. դիմաց):

Իսկ 1929—30 թ. ցանքսային տարածությունը պիտի աճի՝ խորհրդային տնտեսության զծով մինչև 3,7 միլիոն հեկտարի 1928—29 թ. 1,8 միլիոնի դիմաց, իսկ կոլտնտեսությունների՝ 30 միլիոն հեկտար—4,3 միլիոնի դիմաց:

Մորհանտեսությունների և կոլտնտեսությունների շինարարության բուռն հրջողությունը հնարավորվել էր շուրջ և տալիս հնգամյակի յերկրորդ տարվա վերջում, հացի ապրանքային մասսայի 50 տոկոսը գյուղատնտեսության համայնացրած սեկտորից ստանալու ծրագիրը կազմել: Հասել է գյուղի բնիման մեծ դարաշրջանը, հին տնտեսական կարգերի քայքայումը, գյուղատնտեսությանը մինչ այժմ չը տեսնված սոցիալիստական վերաշինության լայն ճանապարհի վրա դուրս գալը: Կուլակների մեծ դիմադրություն հանդեպ ընդհուպ ձեռնարկված և պատմական խնդրի լուծումը՝ կուլակների դասակարգի վերջ տալուն և գյուղում կապիտալիզմի արմատները հանելուն: Դրվավարությունները հաղթված կլինեն, քանի վոր գյուղացիության չքավոր և միջակ մասսաները կենսականորեն շահագրգռված են գյուղատնտեսության սոցիալիստական վերաշինության մեջ:

«Աշխատավոր գյուղացիության առաջ,—ասում

եք կենինը,—կյանքը ինքը դնում է արդեն դեմ առ դեմ հողի համայնական մշակման անցնելու հարցը, իբրև միակ միջոցի դուրս գալու այն միությունից ու ճնշվածությունից, վորին կապիտալիզմը դատապարտել է գյուղական աղգարնակությունը:

Կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը, յեռանդուն կերպով իրագործելով քաղաքի ու գյուղի ղողման նոր ձևերը, ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերաշինության համար մորիլիզացիայի յե յենթարկում բանվոր, բատրակ, չքավոր և միջակ դասակարգերի ավելի և ավելի մեծ մասսաները:

2. Սոցիալիստական արդյունաբերության ղեկավարող դերը

Գյուղատնտեսության կոլեկտիվիզացիայի և մեքենայացման պրոցեսը հենվում է պետական խոշոր արդյունաբերության ուժեղացող կարողության վրա: Մինչդեռ 1927—28 թ. մեր արդյունաբերությունը կարող էր տալ գյուղին միայն 3300 տրակտոր, 1928—29 թ. գյուղատնտեսությունը ստացել է արդեն մոտ 10 հազ. տրակտոր և գյուղատնտեսական մեքենա 220 միլիոն բուբու (1927—28 թ. 149 միլիոն բ. դիմաց) և պարարտանյութ 538 միլիոն բ. (նախընթաց տարվա 216 միլիոն բ. դիմաց): Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյակով նախատեսված սոցիալիստական քաղաքի կողմից այս արտադրական ոգնությունը վերաշինվող գյուղին հսկայական չափերի հասցրած կը լինի: Այնպես վոր հնգամյակի վեր-

Նին գյուղը կը ստանա մինչև 250000 տրակտոր, գյուղատնտեսական գործիքներ 2,4 միլիոն ռ. գումարի, պարարտանյութ մինչև 7 միլիոն տոնն և այլն:

1927—28 թ. Անդրկովկասյան գյուղին տված է յեղել 521 տրակտոր, 1928—29 թ. մենք տվեցինք 1350 տրակտոր, 1498000 բուրլու գյուղատնտեսական մեքենա՝ 1927—28 թ. 940 հազ. բուրլու դիմաց:

Հնգամյակի վերջին Անդրկովկասյան գյուղը կը ստանա տրակտոր՝ 486200 ռ. գումարի իսկ գյուղատնտեսական մեքենա 19004100 ռ. գումարի:

«Մարդկային պատմութեան մեջ առաջին անգամն է լույս յեկել Խորհուրդների իշխանութիւնը, վորը գործով և ապացուցել իրա պատրաստականութիւնը և ընդունակութիւնը գյուղացիութեան աշխատավոր մասսաներին արտադրական սխտեմատիկ և տեղական ոգնութիւնը հասցնելու» — ՍՏԱՆԻ:

Այս արտադրական ոգնութիւնը և գյուղատնտեսութեան ինդուստրացման գործը կարող են իրագործված լինել միայն պետական խոշոր արդյունաբերութեան ղեկավարող դերի ապահովութեան պայմանով: Միայն մեր սոցիալիստական արդյունաբերութեան աճումը, միայն նրա արտադրութեան գործիքներն արտադրող ճյուղերի առաջ բարձրացումը կարող են ապահովել մեր գյուղատնտեսութեան սոցիալիստական վերաշինութեան արագ տեմպերը նրա մեքենայացման և համայնացման հիմքերի վրա: Դրանից բխում է մեր ծանր խոշոր ինդուստրիայի ամենալայն զարգացման խնդիրը՝ «առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնել և առաջ անցնել տեխնիկական և

տնտեսական ասպարեղում պատմական ամենակարճ ժամանակաշրջանում»:

Մեծ աշխատանքների հնգամյա պլանը հանդիսանում է մեր ամբողջ յերկրի սոցիալիստական վերաշինութեան գործնական ծրագիրը: Այս պլանով նախատված են ներդրումներ մեր ժողովրդական տնտեսութեան մեջ 64,5 միլիարդ ռ. անցած հնգամյակում ծախսված 26,5 միլիարդ ռ. դիմաց: Մեր ուժից վերջին շինարարութեան զարգացմանը աջակիս բուռն տեմպերը: Հնգամյակի առաջին տարվա արդյունքը ցույց է տալիս, վոր տնտեսական շինարարութեան վերցրած տեմպը փոշ միայն իրագործելի ու ռեալ է, այլ վոր նրան կարելի յի նույն իսկ արագացնել: Արդյունաբերութեան արտադրութեան ծրագրված 20 տոկոսի աճման փոխարեն հնգամյակի առաջին տարին մենք ունեցինք 20 տոկոս աճում: Կոլտնտեսութիւնների աճումը շատ առաջ գնաց գյուղացիական տնտեսութեան կոլեկտիվիզացիայի ամենահանդուգն պլաններին: Կոլտնտեսութիւնների ցանքսերը աճեցին փոխանակ ծրագրված 94 տոկոսի — 207 տոկոսի: Հնգամյակի առաջին տարվա իրագործման անպայման հաջողութիւնը, դեպի կոլտնտեսութեան մասսայական շարժումը — գյուղի չքավոր տնտեսութիւնների հետ վից — նաև միջակ տնտեսութիւնների հիմնական շերտերի կողմից, վորոնք գործով են համոզվում յերկրագործութեան կոլեկտիվ ձևի առավելութեան մեջ, մեզ տալիս է կատարյալ իրավունք և հիմք համոզվելու, վոր ժողովրդական տնտեսութեան հնգամյա պլանը վոշ ժիայն իրագործված, այլ գերիրագործված կը լի-

նի, կամ կիրադրեցնեք հնգամյակը ավելի կարճ ժամանակում:

1929—30 թ. միայն պիտի ներմուծվեն գյուղատնտեսության մեջ 40000 տրակտոր (պայմանական 10 ուժանոց), վորոնցից պիտի կազմակերպվեն 102 մեքենա-տրակտորային կայաններ: Ցանքսային տարածությունը 1930 թ. գարնանը պիտի ավելացրած լինի $10\frac{1}{2}$ տոկոսով և հասցրած 130,4 միլիոն հեկտարի, վորոնց մեջ հացահատիկային կուլտուրայի տարածությունը պիտի լայնացվի 10 տոկոսով:

Պետական բյուջեն 1929—30 թ. հասցրած է հրակայական գումարի՝ 11,3 միլիարդ ռ. հնգամյակով նախագծված 9,2 միլիարդի դիմաց. գյուղատնտեսության համար հատկացրած է կոնտրոլային թվերի համաձայն 1929—30 թ. 3,200 միլիոն ռ. 1928—29 թ. 1800 միլիոն ռ. դիմաց:

Կոլտնտեսությունների ցանքսային տարածությունը Ա. Ս. Ֆ. Խ. Հ. մեջ 1930 թ. գարնանը հավասար կը լինի 120300 հեկտարի և նրանց հացահատիկային կուլտուրաների ցանքսային տարածությունը կավելանա 12 տոկոսով:

Ա. Ս. Ֆ. Խ. Հ. պետբյուջեն 1929—30 թ. հատառված է 204,445 հազ. ռ. գումարի: Գյուղատնտեսության ֆինանսացման համար կոնտրոլային թվերի համաձայն 1929—30 թ. նշանակված է 81497 հազ. ռ. գումարով:

3. Մանր խնայողաթյունների դերը

Մեծ աշխատանքների պլանը պահանջում է վոչ

միայն բանվոր դասակարգի և գյուղացիական շրջվոր ու միջակ մասսաների ուշժերի և յեռանդի լարումը այլ և նրանց նյութական մասնակցությունը յերկրի ինդուստրացման համար լրացուցիչ միջոցներ գրավելու գործում, նույնպես և տնտեսության խիստ ուժի կիրառումը: Միջոցների ընդհանուր գումարը, վորն անհրաժեշտ է ինդուստրացման և Խ. Ս. Հ. Մ. պաշտպանության ամրացման գործի և մեր տնտեսական-կուլտուրական շինարարության կարիքների համար, հավասար է ըստ հնգամյակի 86 միլիարդ ռ.: Այս գումարի գերակշռող մասը ծածկված կը լինի պետական գույքերի և ձեռնարկությունների յեկամուտներով, արդյունաբերության և գյուղատնտեսության ներքին միջոցներով, նույնպես նաև հարկերով. սակայն այս բոլոր յեկամուտները չեն բավարարի ժողովրդական տնտեսության շինարարության հնգամյակով նախագծված արագ աճմանը: Այս պատճառով արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ ներդրվելիք կապիտալների մի մասը պիտի ծածկված լինի, աշխատանքային խնայողությունները քաղաքի ու գյուղի աշխատավորների ժամանակավորապես ազատ յիդած միջոցները պետբյուջեյի մեջ ներգրավելով: Հնգամյա պլանի համաձայն այս միջոցները, վորոնք պիտի ներգրավված լինեն փոխառությունների և խնայողական զրամարկդների ճանապարհով, հաշված են 6 միլիարդ ռ.: Սոցիալիստական շինարարության և Խորհրդային Միության կապիտալիստական յերկրների կողմից թշնամական շրջապատման սլայմաններում, աշխատավոր ազդարնակության միջոցների մոբիլիզացիան Խ. Ս. Հ. Մ. ինդուստրացման համար հանդիսանում է

յերկրագնդի աշխատանքի առաջին հանրապետութեան սոցիալիստական վերաշինութեան մեջ աւարտի մասնակցութեան ձևերից մեկը:

Փոխառութեանները և խնայողամարկղների նըշանակութեանը Ս. Ս. Հ. Ս. ինդուստրացման գործում արդեն գիտակցում են քաղաքային պրոլետարիատը, զրկելով համարյա բոլորը մեր փոխառութեաններից: Գյուղը այս տեսակետից զգալի կերպով հետ է մնում, գյուղացիների մասնակցութեանը փոխառութեաններին և մասնավանդ խնայողամարկղներին միանգամայն անբավարար է:

Խնայողամարկղները, պետիփոխառութեանների հետ միասին միեւնոյն խնդիրներին ծառայելով, տարբերվում են սակայն նրանցից այն բանով, Վոր պետփոխառութեանները հավաքում են աշխատանքային խնայողութեանները տեղական ժամանակով, մինչդեռ խնայողամարկղները ներգրավում են պետրյուշեյի մեջ խնայողութեանները կարճ ժամանակով, ինչպես նաև ժամանակավորապես ազատ յեղած միջոցները, վորոնք հատկացված են ոգտակար կուլտ-կենցաղային կարիքների ծախսերի համար վորոշ ժամանակից հետո:

Այն խնայողութեանները, վորոնք աշխատավոր ազգաբնակչութեանը ներգնում են փոխառութեանների պարտատոմսերի մեջ, պետք է մնան պետութեան տրամադրութեան տակ փոխառութեան ամբողջ ժամանակամիջոցի ընթացքում: Առանց ծայրահեղ, ամենաանխուսափելի, անվիճելի կարիքի փոխառութեանների պարտատոմսերը չը պետք է ծախել և վոշ գրավ դնել: Յեթե մենք հետ պահանջենք պետութեանից նրան փոխ տված միջոցները ժամանակից առաջ, դա կը

խախտի սոցիալիստական շինարարութեան պլանայնութեանը, վորոշ չափով կը կազմալուծի նրան, թուլացնելով ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական վերաշինութեան տեմպերը: Այս պատճառով ամեն մի աշխատավորի պարտքն է իրա ձեռին պահել մինչև վերջ փոխառութեան ձեռք բերած պարտատոմսերը, կենցաղային և կուլտուրական կարիքների, հանգըստի կամ թանգարժեք իր գնելու համար անհրաժեշտ գումարները հարկավոր ե աստիճանաբար կուտակել խնայողական գրքույկի միջոցով, ներմուծելով սխտեմատիկ կերպով գումարները, ուժերը ներածին չափ: Այս բանը ոգուտ է տալիս ինչպես պետութեանը, նմանապէս նաև խնայողական դրամարկղի ավանդատուին: Փողը, վորը պահ ե տրվում խնայողական դրամարկղին, անձեռնմխելի յե, բերում ե նրա տիրոջ դրամարկղին, անձեռնմխում ե տիրոջ առաջին պայեկամուտ և վեր գարծվում ե տիրոջ առաջին պահանջով: Յերք քաղաքի և գյուղի ամբողջ ազգաբնակչութեանը կը սովորի ոգտվել խնայողամարկղներից և նրանց կը դարձնի իրենց գանձապահ ու քսակ—այն ժամանակ շրջանառութեան մեջ գտնված փողի անագին մասը կարող ե պետութեան ձեռքում ոգտագործված լինել ինդուստրացման գործի համար—մի բան, վոր կը նպաստի մեր աճի անմպերի արագացմանը:

Մեքկացեմեմ կուլակների հակաազիսացիան

Աշխատավոր ազգաբնակչութեան լայն խավերին խնայողական դրամարկղները խնդիրները և ոգուտը բացատրելու համար և դեպի այս դրամարկղները աշխատավոր ավանդատուների նոր մասսաներ գրավե-

լու, այժմ անց ե կացվում ամբողջ Միութեան մեջ միաժամանակ բացատրական կամպանիա «Խնայողութեան Ամսականը»: Քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորները պարտավորվում են ամեն կերպ այս կամպանիային ոգնելու: Իսկ մեզ թշնամի ուժերը յերկրի ներսում մղում են նրա դեմ՝ կատաղի հակաազդեցությամբ: Յե՛վ դա հասկանալի չէ: Մեր յերկրի բնագույտը անցնելով—դա կը նշանակի կառուցանել նոր գործարաններ, հանքեր, նավթային վերջաններ, հնոցներ, մետաղագործական և մեքենայագործական գործարաններ, դա կը նշանակի ելեքտրականներ շինել, դա կը նշանակի ծածկել յերկրի ելեքտրաթիւերով, վորոնք շարժիչ ուժ և իլէկտրական էներգիա կը բերեն քաղաք ու գյուղ, բանվորական բնակավայրեր, գործարաններ, կոլտնտեսություններ և խորհրդայիններ: Դա կը նշանակի ամեն կերպ բազմացնել յերկրի արտադրական ուժերը, շատացնել ապրանքների և հացի քանակությունը, աստիճանաբար վերացնել ապակասությունը: Դա կը նշանակի գյուղատնտեսությունը ավելի կատարյալ աստիճանի վրա բարձրացնել, դնել նրան նոր տեխնիկական հիմքի վրա, բերքը և հողի հասույթը բարձրացնել, գյուղացու ծանր աշխատանքը թեթեւացնել, քաղաքի և գյուղի արտադրական զոգումը ամրացնել՝ ծանր ինդուստրիայի, գյուղատնտեսության, մեքենայագործության, տրակտորա-կառուցման, քիմիական պարարտացման ու ֆլաուատուների դեմ կռվի միջոցների արտադրությունը:

Բնական է, վոր նեպմանը, բյուրոկրատը, կու-

լակը իր որբանյակներով, չարչին և տերտերը, իրենց գոյութեան համար կռվողով, կռվում են այս բոլոր միջոցների դեմ, յերկրի ինդուստրացման, գյուղատնտեսության համայնացման ու մեքենայացման, մեր փոխառությունների, խնայողական դրամարկղների դեմ, վորոնք սոցիալիստական շինարարության համար լրացուցիչ միջոցներ են հավաքում: Սա դասակարգա-րացուցիչ միջոցներ են հավաքում: Սա դասակարգա-յին կռիվ է, վորը ամենատուր կերպով արտահայտվում է գյուղում, վորտեղ գյուղատնտեսության սոցիալիստական վերաշինությունը ամենազգալի կերպով շոշափում է կապիտալիստական տարրերի շահերը: Յե՛վ խնայողության ամսականը անց է կացվում այս պատճառով, իբրեւ քաղաքական կամպանիա, անցնելով սուր դասակարգային կռվի միջավայրում: Կուլակային հակաազդեցության արտահայտվել և սուր կերպով խորհուրդների ընտրությունների, ինդուստրացման Յ-րդ փոխառության տարածման, հացամթերման ժամանակ և այլն: Ահա այս պատճառով է, վոր վճռական նշանակություն ունի ուժի կազմակերպել դասակարգային թշնամու դավերը տապալելու և դուրս բերել նրա ազդեցությունից աշխատավոր գյուղացիության այն մասը, վոր դեռ վորոշակի չի դիտակցել իր իրական դասակարգային շահերը: Կուլակների զրպարտությունը խնայողաժամարկղների մասին յերբեք չէր թուլանում խնայողաժամարկղների կազմակերպման որից, կուլակների արբանյակների հետ գյուղական վաշխառուն և հոգևորականությունը անդադար տարիներ ընթացքում զրպարտում էին խորհրդային խնայողաժամարկղների վրա, վախեցնելով ամեն կերպ գյուղացիության հետամնաց տարրերը:

տում միայն իր բերքի կամ ուրիշ գյուղատնտեսական արտադրութեան մի մասը ծախելուց կամ անձնական աշխատանքով վորեն ժամանակավոր յեկամուտ ստանում, պետք է նույնպես սովորի իրա փողը խնայողբամարկղին պահ տալ մինչև վոր փողը նրան հարկավոր լինի. տնտեսականորեն դա նրա համար ավելի ոգտակար է, քանի վոր խնայողբամարկղը իր ավանդատուի հանձնարարութեամբ պետութեան հասանելիք պարտադիր վճռումներ է կատարում, ինչպես որինակ գյուղատնտեսական հարկը: Ամեն մի տնտեսութեան մեջ ժամանակ առ ժամանակ հարկավոր է կատարել միանվագ բավականին խոշոր ծախսեր, դրա համար անհրաժեշտ գումարները ավելի հարմար ու հեշտ է կուտակել պարբերաբար խնայողբամարկղը փող ներմուծելով. դրանով և փողն ապահով է, ավելանում է կուտակումը, նրա վրա դալով այն յեկամուտը, վորը տուիր է խնայողբամարկղը (8—9 տոկոս) և ոգուտ է տրվում նաև պրոլետարական պետութեանը, վորը ահադին գումարներ է ծախսում գյուղատնտեսութեան սոցիալիստական վերաշինութեան վրա: Խնայողբամարկղը կոգնի նաև ոգտակար իր գներու անհրաժեշտ գումար կուտակելուն:

Գյուղական ուսուցիչը, գյուղատնտեսը, բժիշկը, կոոպերատիվի, հիմնարկութեան կամ ձեռնարկի ծառայողը պիտի սովորեն ուշժերը ներածին չափ ամսական աշխատավարձի մի մասը տնտեսել հանգստի կամ անհրաժեշտ իրեր գներու հարկավոր գումար կուտակելու համար: «Խնայողութեան ամսականին» ամեն մի աշխատավոր գյուղացի պիտի դառնա խնայողական գրամարկղի տվանդատու: Միայն փոխառութեան

գրվելով չը պիտի սպառվի աշխատավոր գյուղացու նյութական մասնակցութունը Խ. Ս. Հ. Մ. ինդուստրացման գործի մեջ: Պարզ բան է, վոչ վոք չի կարող բանի կամ կիսարունի կարգով ստիպել աշխատավոր գյուղացուն խնայողբամարկղի ավանդատու դառնալ: Կամպանիան անցնում է միանգամայն կատարյալ կամավոր հիմքի վրա: Յեվ ավելորդ էլ են ուրիշ միջոցները, բացի գյուղացիութեան չքավոր և միջակ մասսաներին բացատրելուց խնայողբամարկղներ իսկական դերի և նշանակութեան մասին. հարկավոր է ցրել կուլակային գրպարտութունը խնայողբամարկղներին մասին, հարկավոր է համոզել աշխատավոր գյուղացիութեանը, վոր խնայողբամարկղներից ոգտվելը նպատակահարմար է: Դա է մեր խնդիրը: Ու յեթե «Խնայողութեան ամսականին» ընթացքում մենք այս բացատրական աշխատանքը հաջող անցկացնենք, մեր խնայողբամարկղները կը ժողովրդականանան, իբրև ազգաբնակչութեան լայն աշխատավոր մասսաներին ծառայող ապարատ:

Ինչ արտոնություններ, ոգուտ յեվ հարմարություններ են են ցալիս պեթաթի. խնայողբամարկղները իրենց ավանդատուներին

Ավանդատուների հիմնական ոգուտը կայանում է ավանդի պահպանութեան և գաղտնի լինելու մեջ, նաև այն յեկամուտի մեջ, վորը նրանք ստանում են իրենց խնայողութուններն ու ժամանակավորապես ազատ յեղած միջոցները խնայողբամարկղների մեջ տեղավորելով:

Անժամկետ ավանդներով ավանդատուն ստանում է 6 տոկոս տարեկան, այսինքն տարվա ընթացքում ավանդի ամեն մի 100 ր. 8 ր. յեկամուտ: Նույն ավանդներով հիմնարկությունների և ձեռնարկությունների անունով խնայդրամարկդները վճարում են 6 տոկոս տարեկան:

Ժամկետավոր ավանդներով (3 ամսվա, 6 ամսվա, 1 տարվա և այլն) խնայդրամարկդը վճարում է 9 տոկոս տարեկան, յեթե ավանդատուն անհատական է և 7 տոկոս տարեկան հիմնարկություններին և կազմակերպություններին:

Անժամկետ ավանդներով տոկոսները ամեն տարվա վերջում միացվում են ավանդներին: Դրանից հետո տոկոսներն աճում են վոչ միայն ավանդի գումարի վրա, այլ նաև նախընթաց տարվա աճած տոկոսների հետ միասին:

Եթե ավանդատուն տարվա կիսին վերցնում է ամբողջովին իր ավանդը, ապա ավանդի խնայողական դրամարկդում յեղած ժամանակի համար նրան հասանելիք տոկոսները վճարվում են անմիջապես:

Պետ. աշխ. խնայդրամարկդներին վստահած գումարների և արժեքների անվթարության համար Խ. Ս. Հ. Մ. կառավարությունը ընդունում է իր վրա լիակատար պատասխանատվությունը:

Ավանդատուի առաջին պահանջով իր խնայքը քոյիլ ներկայացնելով նա կարող է հետ ստանալ իր ավանդի մի մասը կամ իր փողը ամբողջովին:

Խնայողական դրամարկդներին հիմնական հարմարություններն և առավելությունները հանդիսանում են խնայողական դրամարկդում պահ տրված փողի

անվթարության և լիակատար պահպանության ապահովությունը:

Խնայողական դրամարկդներում սահմանված և ավանդատուների ավանդային գործառնությունների լիակատար գաղտնապահությունը:

Բացի իրեն ավանդատուից և նրա որինական ներկայացուցիչներից ավանդի գաղտնիքը բանալ կարելի չէ միայն դատական որդանների և դատախազության պահանջով բացառապես, այն ել նրանց մասին կատարվող քրեական գործերի առիթով:

Քննիչ որդանները կարող են պահանջել գաղտնիքը բանալ միայն դատարանի կամ դատախազության դրավոր վորոշման համաձայն, այն ել միայն նույնպես քրեական գործերի առիթով:

Խնայդրամարկդների մեջ մուծված ավանդների յեկամեւաները տղատ են վորեւ հարկերից ու տուրքերից:

Ժառանգներից, լինեն նրանք որենքի թե կուրկի հիման վրա, խնայդրամարկդներում գտնված ավանդների գումարից ժառանգային հարկը չի գանձվում անկախ ավանդների գումարից:

Ավանդներ վորո ժամկետով (ժամկետավոր ավանդները)

Ավանդները վորոշ ժամկետով ընդունվում են 3 ամսից վոչ պակաս ժամանակով առանձին անհատների համար:

Ավանդների այս ձեւը ամենից հարմարն է տըն-

տեսական ինվենտարի իր, շենք կամ ուրիշ բան գնելու անհրաժեշտ գումարը կուտակելու համար:

Բացի դրանից, ավանդի այս ձևը ձեռնառու յի նաև նրանով, վոր նա ավելի բարձր տոկոս է տալիս (փոխանակ 8 տոկոսի 9 տոկոսը):

Ժամկետավոր ավանդի նվազագույն գումարը— 10 ռ.: Ժամկետավոր ավանդները կաշիքի յի հետ պահանջել և ժամկետից առաջ—միայն այս դեպքում տոկոսները վճարվում են 8 տոկոսի հաշվով և վոր 9 տոկոսի:

Ավանդ-գրավներ

Պետական հիմնարկության կամ ձեռնարկության հետ մի վորևե պայման կապելիս ավանդատուն իրավունք ունի ներկայացնել իրա խնայողական գրքույկը, իբրև պայմանադրի գրավականը:

Կտակային կարգադրութիւններ

Խնայդրամարկդի ամեն մի ավանդատու իրավունք ունի, խնայողական գրքույկի վրա մակագրելով կամ հատուկ հայտարարութիւն տալով, նշել այն անձանց, վորոնց իր մահից հետո ավանդը պիտի տրվի: Ու այս դեպքում պարտավորեցուցիչ չէ, վոր անձը, վորին ավանդատուն կտակում է իրա ավանդը, լինի նրա որինական ժառանգը:

Ավանդը կաշիքի յի կտակել մեկին ամբողջովին, կամ մի քանի անձանց մաս-մաս:

Ավանդները տրվում են խնայդրամարկդներին

այսպիսի կտակային կարգադրութիւններով առանց վորևե ձեռնարկութիւնների, ներկայացնելով լոկ տեղեկանքը ավանդատելի մահվան մասին և ստացողի անձնավորութիւնի վկայութիւնը:

Անկախ արված կտակից, ավանդատուն կարող է կենդանի յեղած ժամանակ իրա ավանդը կարգադրել ըստ իր հայեցողութիւնի:

Անչափանոս ավանդատուներ

Յեթե անչափահաս ավանդատուն ինքը փոքր խնայդրամարկդ ներմուծի իր անունով, այն ժամանակ իր ավանդը նա կարգադրում է անկախորեն առանց հոգաբարձուի կամ խնամակալի մասնակցութիւնի:

Ինչ պիտի է անել խնայդրութիւն կորցնելու դեպքում

Խնայդրութիւնը կորցնելու դեպքում ավանդատուն պետք է կորուստի մասին հայտարարութիւն տա խնայդրամարկդին, վորից հետո խնայդրամարկդը տալիս է նրան նոր խնայդրութիւն:

Փողային փոխադրական գործառնութիւններ

Խնայդրամարկդներին ավանդատուները իրավունք ունեն ամբողջ ավանդը կամ նրա մասը փոխադրել ուրիշ խնայդրամարկդ:

Փոխադրութիւնը կարելի յի կատարել փոստով կամ հեռագրով:

Ակկրեդիտիւններ

Ակկրեդիտիւնք հանդիսանում է ճանապարհին փող ապահով պահելու ամենալավ միջոց:

Ամեն մի քաղաքացի, նույնիսկ խնայողամարկղում ավանդ ունեցող, յետե նա ուզում է իրեն ապահովել ճանապարհին կորուստից և գողութիւնից, կարող է խնայողամարկղ մուծվող փողի փոխարեն հատուկ փաստաթուղթ ստանալ: Այս փաստաթղթով, ակկրեդիտիւն կոչված, նա կարող է նրա մեջ նշած գումարը ստանալ ամբողջովին կամ մաս-մաս խ. Ս. Հ, Մ. բոլոր խնայողամարկղներում (բացի գործակալական դրամարկղներից):

Հարկերի յեվ թուրքերի ընդունելութիւններ

Բացի ուրիշ հարմարութիւններից ավանդատուների համար խնայողամարկղները ընդունում են նրանցից զանազան հարկերի և տուրքերի վճարքը, նրանց մեջ նաև դուղատնտեսական հարկը:

Դյուղացի ավանդատուին բավական է խնայողամարկղին ներկայացնել հարկ վճարելու մասին հայտարարութիւն, կցելով նրան հարկային թերթը, վորից հետո վճարելիք գումարը նրա խնայմարմարկղից դուրս է գրվում և հարկային թերթի վրա մակագրվում է ընդունված փողը:

Սրանով վերջանում են գյուղացու պարտավորութիւնները գյուղատնտեսական հարկ վճարելու վերաբերմամբ, մնացածը (ֆինտեսչին իմաց տալը) կանի խնայողամարկղը ինքը:

Մանր գումարների խնայողութիւններ

Ամենքը հնարավորութիւն. չունեն միանգամից մեծ գումար փող զնելու խնայողամարկղը:

Աշխատավորների մանր գումարների խնայողութիւնները կուտակելու հնարավորութիւնը դուրեացնելու համար, խնայողամարկղները տանը գանձարկղների (դուլարներ) և մարկաների միջոցով խնայողութիւն սխտեմ մտցրին:

Խնայողամարկղներում փոքր գնով ծախվում են հատուկ մետաղե գանձարկղները, վորոնց բանալին գտնվում է ամեն մի դրամարկղում: Գանձարկղները ծախվում են արժան գնով ինքնարժեքով: Աշխատավորը հնարավորութիւն ունի գանձարկղում հավաքվող գումարները ժամանակ առ ժամանակ տեղավորել խնայողամարկղը: Դրա համար բավական է գանձարկղը խնայողամարկղը բերել, վորտեղ նա տիրոջ ներկայութիւնը բացվում է և հավաքած փողը հաշվում են:

Կարելի է նաև մանր խնայողութիւնները կուտակել մարկաների միջոցով: Դրո համար բավական է 5 կամ 10 կոպեկանոց փոստադրոշմներ կպցնել թղթի հասարակ թերթի վրա:

Յերը այս թերթը մի ըուբլու մարկաներով լըցրած կը լինի, նրան կարելի է խնայողամարկղին հանձնել իբրեւ կանխիկ դրամ: Այս գումարին հավասար նրան անմիջապէս տրվում է խնայողութիւնը, իսկ յետե նա առաջուց ուներ արդեն արած ավանդը, այս գումարը կցվում է ավանդին:

Ֆոնդային գործառնությունները

Խնայողամարկղները առնում ու ծախում են պետական փոխառությունների պարտատոմոսները պաշտոնական դնով, ժամկետավոր կտրոնները և տիրաժիշենթարկված պարտատոմոսների համարժեքը վճարում են, ինչպես նաև շահումները:

Խնայողամարկղները ընդունում են նաև պետփոխառությունների պարտատոմոսները կառավարումով կամ առանց կառավարման: Նառավարումով պահ ընդունված պարտատոմոսները խնայողամարկղները ստուգում են տիրաժաշին աղյուսակներով և յեթե վորևե պարտատոմոսի վրա շահումն է ընկել, խնայողամարկղը իմաց է տալիս դրա մասին կլիենտին, իսկ տարած գումարը մուծում է նրա հաշվին: Այս գեպքում խնայողամարկղը կտրում է նաև կտրոնները և նրանց արժեքը նույնպես մուծում է կլիենտի հաշվին: Յեթե պարտատոմոսները պահ են տված առանց կառավարման, խնայողամարկղը կառավարման հոգու չի տանում և կլիենտը ինքը պետք է հետևի կուպոններին և շահումների տիրաժաշին աղյուսակներին:

Խնայողամարկղները պարտատոմոսների պահը կառավարումով ձրի յին կատարում, յեթե պահ տված պարտատոմոսների անվանական արժեքը 200 ռ. չի անցնում: Իսկ յեթե պահ տված պարտատոմոսների արժեքը 200 ռուբլուց անցնում է, խնայողամարկղը վերցնում է պահ տված պարտատոմոսների ամեն մի 100 ռուբլուց 7 կոպեկ: Բանավորների և ծառայողների կոլլեկտիվներից պահ ընդունված պարտատոմոսների պահը և կառա-

վարումը խնայողամարկղները ձրի յին կատարում ինչ գումար ել լինի:

Պարտատոմոսները պահ են ընդունվում առանց գումարի և ժամանակի սահմանափակման (մինչև վոր կլիենտը պարտատոմոսները կը պահանջի):

Խնայողամարկղից ստացած պահի վկայականով կլիենտը կարող է հետագայում պահ տալ փոխառությունների ուրիշ պարտատոմոսներ:

Պետփոխառությունների պահ տված պարտատոմոսները դիմաց, վորոնց համար թույլատրված է որևէ քով փոխառությունը, կլիենտը կարող է փոխառություն անել պարտատոմոսների անվանական արժեքի մինչև 60 տոկոսգումարով: Փոխ ստացած գումարը նա կարող է շիջել ամբողջովին կամ մաս-մաս:

Հասարակային խնայողությունները

Այս տեսակ խնայողությունները գյուղում խնայողական գործի գարդացման համար ունեն մեծ նշանակություն:

Այսպիսի խնայողությունների նպատակը կարող է լինել՝ կամ գյուղացիների տնտեսությունների համար ամենահասարակ իրերի գնումը կամ վորևե ուրիշ փոքր ծախսը. որինակ՝ գութանի, հորսելու, զրտված սերմերի, պարարտանյութների գնումը և այլն:

Անկանխադրամ (անփող) հաժվախությունները

Սոցիալիստական ինդուստրացման համար փող հայթայթելու խնդրի հետ միասին խնայողամարկղներ-

ըը, իբրև պետութեան ամենաճշգրտագործող և աշխատավոր ժողովրդին մոտ ապարդատ, կարող են և պետք է մեծ դեր խաղան վերակառուցման ժամանակաշրջանի ամենակարևոր խնդիրներից մեկի իրադրոժման մեջ—այն է՝ հրաժարվել աստիճանաբար փողային հաշվարկութեաններից և անցնել ազգաբնակչության պետական և հասարակական կազմակերպութեաններին վճարքների անկանխադրամ հաշվարկութեաններին:

Այս ուղղութեամբ մեծ քաղաքական դեր կունենա՝ խնայողամարկդներում և ուրիշ վարկային հիմնարկներում մտցնել անկանխադրամ գործառնութեանները հաշվարկութեաններով, այլ կերպ կոչված ժիրոգործառնութեանները:

Այս հարցի վերաբերմամբ ՀԿԿ (Բ) 16-րդ Համամիութենական կուսկոնֆերենցիան իրա փորձման մեջ՝ ժողովրդական տնտեսութեան ֆինանսացման սխառութի և վարկատվութեան բարելավման մասին նշեց անհրաժեշտութեանը՝ «ազգաբնակչության պետական, կոմմունալ և հասարակական կազմակերպութեաններին մասսայական վճարքների բնագավառում ամենալայն կերպով տարածել անկանխադրամ հաշվարկութեաններ կազմակերպելու փորձը»:

Անկանխադրամ հաշվարկութեանները դա վճարքների այնպիսի մի ձև է, յերբ վճարքը վորևէ հաշվով կատարվում է վոչ թե կանխիկ փոխով, այլ վարկային հիմնարկին, որինակ խնայողամարկդին կամ բանկին, տրվող գրավոր կարգադրութեան միջոցով: Խնայողամարկդը, ստանալով ավանդատուի այսպիսի գրավոր կարգադրութեանը, դուրս է գրում նրա ավանդից վճառելիք գումարը և մտցնում է նրան այն ան-

ձե կամ հիմնարկութեան հաշվին, վորին հասնում է փողը:

Պատշաճավոր հաշվով վճարը կատարելու համար, խնայողամարկդի ավանդատուն կարգադրութեան բլանկը լրացնում է տանը, ստորագրում, իր խնայողամարկդի հասցեն մակագրում ու գցում հաշվի հետ միասին առանց փոստադրոժի փոստարկղը: Խնայողամարկդը կատարում է վճարքը նրա ավանդից և նրան վճարքի անդորրագիր է ուղարկում. անդորրագիրը ուղարկելիս փոստը վերցնում է նրանից 5 կոպեկ: Ավանդատուի կարգադրութեամբ խնայողամարկդը ինքը հսկում է ժամկետներին և կատարում է անհրաժեշտ հաշվարկութեանները:

Ներկայումս անկանխադրամ հաշվարկութեանները մտցրած են միայն մի քանի խոշոր քաղաքներում՝ Մոսկվա, Լենինգրադ, Պարկով, Թիֆլիս, Մինսկ, Ռոստով Դոնի վրա, Կիև, Ուկրաինա, Սարատով, Վորոնեժ, Նովո-Սիբիրսկ և Ռյազան. 1929—30 թ. այս գործառնութեանները մտցրված կը լինեն նաև մյուս քաղաքներում և տնտեսապես ուժեղ ռայոններում և գյուղերում: Խնայողամարկդները անկանխադրամ հաշվարկութեաններին միջոցով ձևակերպում են վճարքներ՝ բնակարանի, ջրանցքի, հեռախոսի, ելեքտրակաշնութեան համար, կյանքի և գույքի ապահովագրման, սոցալի և ուրիշ վճարքներ:

Յ Ե Գ Բ Ա Կ Ա Գ Ո Ւ Բ Ե Ն

Վորպեսզի աշխատավոր գյուղացիութեան մասնաները իսկապես կարողանան լիակատար կերպով ոգ-

տըվել խնայողամարկղներից, հարկավոր և նրանց ապարամուն ևս մոտեցնել աշխատավոր գյուղացիությանը: Խնայողամարկղների աշխատանքից պիտի վերացված լինեն ձգձգումները, բյուրոկրատիզմը, անզգայուն, վոչ ընկերական մոտեցումը դեպի ավանդատուն: Հարկավոր և խնայողամարկղը դարձնել արագ, աշխատավոր ավանդատուներին ծառայող ապարատ: Խնայողամարկղների ցանցը պետք և մոտեցվի անմիջապես աշխատավոր ազգաբնակչությանը. «Խնայողամարկղները—մասսաներին»:

Պետք և ողնել խնայողական ապարատին իրա աշխատանքը հաջող զարգացնել, նրան ավելի պարզ դարձնել, մոտեցնելով գյուղացիության չքավոր ու միջակ հիմնական մասսաներին և դրա համար բոլոր գյուղխորհուրդներին առնթիւ կազմվում են պետվարիկին և խնայողական գործին նպաստող գյուղական հանձնաժողովները:

Գյուղական պրոլետարները, բատրակները, չքավոր և միջակ մասսաները պետք և իրանց հասարակական կոնտրոլի տակ վերցնեն այս հանձնաժողովների աշխատանքը, նույնպես և խնայողական դրամարկղների աշխատանքը: Մատնանշեցեք խնայողամարկղների աշխատանքի պակասութունները, դործունեա դարձրեք նպաստման ձևը հանձնաժողովները, ոգնեցեք ձեռ պրոլետարան պետությանը կարգավորել արժան և պարզ ապարատը, վորը հավաքելու յն աշխատավորական խնայողութունները և ժամանակավորապես ազատ յեղած գումարները սոցիալիստական շինարարության մեծ գործի համար:

Խնայողության գործը—լայն պրոլետարական հասարակական կոնտրոլի տակ:

Խնայողութունների համաժողովեցնական ավականը

Կամպանիան անցկացնելու լուրնգները

1. Պահել ամենափոքր խնայողությունը մեր խոշոր մեքենայական ինդուստրիայի համար: Լենին:
2. Ներմուծենք ինդուստրացման հնգամյակի մեջ բոլոր աշխատանքային խնայողությունները՝ յերկարատև՝ փախուսությունների մեջ, ժամանակավորապես ազատ յեղածները—խնայողամարկղների մեջ:
3. Փոխառություններին և խնայողամարկղներին հակառակ են—տերտերը, կուլակն ու չարչին: Բատրակը, չքավորն ու միջակը նրան հակահարված կը տան:
4. Խորհրտնտեսությունների բանվոր, կոլտնտեսության անդամ—դուք պիտի դառնաք խնայողամարկղի ավանդատու:
5. Ստուգիր, արդյոք ամեն ինչ կատարե՞լ և փոխառություններին և խնայողամարկղներին նպաստող բո հանձնաժողովը:
6. Խնայողամարկղները—մասսաներին:

ՀՀ Ազգային գրադարան



NI 0209146

33

1 | Apr
2-67